**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

---

*12 մայիսի 2020թ.*

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագծերի փաթեթը (հիմնական զեկուցող՝ Նիկոլայ Բաղդասարյան),

բ) նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքներում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագծերի փաթեթը դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 8 էջ:

Հարգանքով՝

Մխիթար Հայրապետյան (049)
Նիկոլայ Բաղդասարյան (051)
Նարեկ Զեյնալյան (029)

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 158.1.-րդ հոդվածով՝

**«Հոդված 158.1. Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը**

1. Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը կատարելու համար նախազգուշացում կիրառելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից համապատասխան խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասում «158-րդ հոդվածի 19-րդ մասով» բառերից հետո լրացնել «158.1.-րդ հոդվածով» բառով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

**Հոդված 158.1. Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը**

1. Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը կատարելու համար նախազգուշացում կիրառելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից համապատասխան խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

## ՀՈԴՎԱԾ 230. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

1. Սույն օրենսգրքի 42-րդ, 42.1-43-րդ, 45-47.13-րդ հոդվածներով, 47.15-րդ հոդվածի 1-3-րդ, 7-9-րդ մասերով, 80-86-րդ (եթե դրանք համարվում են մթնոլորտային օդի պահպանության սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի խախտումներ), 87-րդ (առողջապահական տեսչական մարմնի կարգադրագրերը չկատարելու համար), 96.1-ին, 152-րդ հոդվածներով, 158-րդ հոդվածի 19-րդ մասով, **158.1-րդ հոդվածով,** 173.1-ին հոդվածի 3-րդ մասով, 173.3-րդ և 213.2-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Առողջապահական տեսչական մարմինը:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված* 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 36-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ կետով՝

«3.1) լիցենզավորված անձի կողմից օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան խախտումը չվերացնելու դեպքում.»

2) 2-րդ մասում «3-րդ» թվից և բառից հետո լրացնել «3.1.-րդ» թիվը և բառը.

3) 8-րդ մասում «3-րդ» թվից և բառից հետո լրացնել «3.1.-րդ» թիվը և բառը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Հոդված 36. Լիցենզիայի գործողության կասեցման դեպքերը**

1. Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել՝

1) լիցենզավորված անձի կողմից լիցենզիան օրենքով չնախատեսված դեպքերում այլ անձի օգտագործման տալու, գրավ դնելու կամ օտարելու դեպքում.

2) լիցենզավորված անձի կողմից սույն օրենքով նախատեսված դեպքերում փոփոխությունների մասին լիցենզավորող մարմնին ժամանակին չհայտնելու կամ սույն օրենքով սահմանված դեպքերում անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները լիցենզավորվող մարմին ժամանակին չներկայացնելու դեպքերում.

3) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման ժամանակ այդ լիցենզիայի պահանջների ու պայմանների այնպիսի խախտման դեպքում, որոնք անմիջական վտանգ կամ ռիսկ են պարունակում մարդկանց կյանքի կամ առողջության համար կամ այդ լիցենզիայի պահանջների ու պայմանների, լիցենզավորման ենթակա գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների կոպիտ խախտման դեպքում.

«3.1) լիցենզավորված անձի կողմից օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան խախտումը չվերացնելու դեպքում.»

4) լիցենզավորված անձի կողմից սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված խախտումներ կատարելու դեպքում.

5) լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման ենթակա գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց՝ օրենսդրությանը համապատասխան ստուգումների իրականացմանը խոչընդոտելու կամ պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.

6) լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելու դեպքում, եթե տվյալ խախտման համար լիցենզավորված անձի նկատմամբ այդ բնագավառը կարգավորող օրենքով պատասխանատվության այլ միջոց սահմանված չէ.

7) լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավորապես զրկելու դեպքում.

8) մասնագիտական գիտելիքներ կամ լիցենզիայի պահանջներով կամ պայմաններով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող անձի բացակայության դեպքում՝ միայն այդ անձի մասով, բացառությամբ սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքի.

9) լիցենզավորված անձի դիմումի համաձայն.

10) սույն օրենքով նախատեսված դեպքերում լիցենզիայի գործողության դադարեցման մասին լիցենզավորող մարմնի կողմից դիմում ներկայացնելիս.

11) տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում.

12) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 3-րդ, 3.1.-րդ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 11-րդ կետերով նախատեսված դեպքերում լիցենզիայի գործողությունը կասեցվում է մինչև խախտման պատճառի վերացումը:

3. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում լիցենզիայի գործողությունը կասեցվում է երկու ամիս ժամանակով:

4. Սույն հոդվածի առաջին մասի 9-րդ կետով նախատեսված դիմումները լիցենզավորող մարմնում քննարկվում են այն ստանալու օրվանից՝ 15 օրվա ընթացքում: Եթե դիմում տալու օրվանից՝ 20 օրվա ընթացքում, դիմումը չի քննարկվում կամ որոշում չի կայացվում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիցենզիայի գործողությունը կասեցված՝ լիցենզավորված անձի կողմից նշված ժամանակով:

5. Լիցենզիայի գործողության կասեցման մասին լիցենզավորված անձի դիմումը կարող է մերժվել, եթե դա նախատեսված է օրենքով կամ լիցենզավորման կարգերով կամ, եթե լիցենզիայի գործողության կասեցման հետևանքով ուղղակի վնաս կհասցվի պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին ու բարի համբավին:

6. Սույն հոդվածի առաջին մասի 9-րդ կետով նախատեսված դեպքերում լիցենզիայի գործողությունը կասեցվում է լիցենզավորված անձի կողմից նշված ժամկետով:

7. Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքերում լիցենզիայի գործողությունը կասեցվում է օրենքով նախատեսված ժամկետով:

8. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 3.1.-րդ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը կասեցվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

9. Սույն հոդվածի առաջին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում լիցենզավորված անձին ժամանակավորապես լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մասին ակտն ուժի մեջ մտնելու օրվանից:

10. Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված լիցենզիաների վրա նշված լիցենզիաների տրման ամսաթվից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**Առկա իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Ավտոմոբիլային ճանապարհների խաչմերուկներում կամ դրանց շատ մոտ գտնվող դեղատների «կանաչ խաչ» գովազդային լուսատախտակը և «դեղատուն» վերտառությամբ գովազդային վահանակը, վարորդների կողմից նույնացվելով տրանսպորտային երթևեկությունը կարգավորող լուսացույցների կանաչ լույսի հետ, երթևեկության ընթացքում շփոթություն են առաջացնում, և հաճախ դառնում վթարային իրավիճակի պատճառ: Վարորդները, նույնացնելով նշանի կանաչ լույսը լուսացույցի հետ, հատում են ճանապարհը՝ ենթարկվելով վարչական պատասխանատվության:

Նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ՝ միաժամանակ ապահովելով Հայաստանի Հանրապետության կառավարության դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջների կամ պայմանների կատարման ապահովումը:

Այսպիսով, առաջարկում ենք սահմանել վարչական պատասխանատվություն դեղատնային գործունեություն իրականացնելու համար լիցենզիա ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելու համար: Այսպես, իրավաբանական անձի կողմից վերոնշյալ իրավախախտումը թույլ տալու համար նախատեսվում է նախազգուշացում, իսկ նախազգուշացումը ստանալու պահից երեսուն օրվա ընթացքում այն չվերացնելու դեպքում, վերջինս ենթարկվում է պատասխանատվության՝ տույժի տեսքով, իսկ կրկին անգամ չվերացնելու դեպքում Տեսչությունը դիմում է համապատասխան լիցենզավորման մարմնին՝ լիցենզիայի կասեցման հարցը քննարկելու համար:

Այսպիսով փաստենք՝ Նախագծով նախատեսվող փոփոխությունների համաձայն, տնտեսվարող սուբյեկտի հետ անմիջականորեն շփում ունեցող մարմինը՝ Տեսչությունը, իրավասություն ունի իրականացնել վարչական վարույթ, վարչական պատասխանատվության ենթարկել տնտեսվարող սուբյեկտին՝ առանց լիցենզիայի կասեցման, ինչպես նաև հստակ գրավոր կերպով սահմանել, թե տնտեսվարող սուբյեկտը ինչ գործողություններ կատարելով կարող է իր վարքագիծը համապատասխանեցնել ՀՀ կառավարության որոշման պահանջներին: Այս նպատակով անհրաժեշտ փոփոխություն է կատարվել նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում:

**Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման դեպքում կբացառվեն վարորդների՝ գովազդային լուսատախտակների և տրանսպորտային լուսացույցների նույնացմամբ պայմանավորված իրավախախտումները, իսկ ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման հնարավորությունները կնվազեն: